№ 16. Մայիսի 3. — 1873 — Մայիսի 3. № 16.

ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ ԳԻՆԸ.

Տարեկան գինն է 5 ռուբլի (փոստի ծախսով): Օտարաքաղաքացի բաժանորդները պիտի գիմեն այս հասցէով. Въ Тифлисъ. Въ Редакцію Армянской Газеты „Мшакъ".

Թիֆլիսում կարելի է ստորագրվիլ խմբագրատան մէջ (Արծրունու տուն) և պ. Պատուրեանցի խանութում:

ՄՇԱԿ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԵԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ.

Մասնաւոր յայտարարութիւն տպել տուողը պիտի վճարէ 10 հասարակ տառի համար 1 կոպէկ արծաթ: Յայտարարութիւններ տպվումեն Հայերէն, Ռուսերէն, Վրացերէն, Ֆրանսիարէն, Գերմաներէն և Թուրքերէն:

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մանուցումն։—Մեր ստորին կարգի ուսումնարաններ։—Ներքին տեսութիւն։ Ընտրութեան ձևը։ Գերմանական լեզու։ Նամակ Ցխինուալից։ Նամակ խմբագրին։ Նամակ Բաքուից։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Մանուկ Թիւրքիան և յետադէմ շարժումը։ Նամակ Մելիտինէից։ Նամակ Վիէննայից։—Խառն լուրեր։—Առևտրական։—Յայտարարութիւններ։—Բանասիրական։

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

„Մշակ" լրագրի խմբագրութիւնը խնդրում է այն բաժանորդներից, որք այս 1873 թուի տարեկան վճարը դեռ ևս հատուցած չեն, բարեհաճեն որքան կարելի է շուտ հասցնել խմբագրութեանը „Մշակի" տարեկան վճարը։

ՄԵՐ ՍՏՈՐԻՆ ԿԱՐԳԻ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԸ

I

Շատ անգամ մենք գանգատում ենք հայերի վրա, թէ նրանք ուսումնարանների համար այնքան չեն զոհում, որքան օրինակելի դպրոցների շքեղութեան համար։ Իրանց եկեղեցիների գմբէթը նորոգելու և զարդարելու համար հազարներով են մսխում, իսկ գուցէ նոյն եկեղեցու գաւթում գտնված ուսումնարանը ողորմելի դրութեան մէջն է մնում...

Բայց այնու ամենայնիւ, համեմատելով ուրիշ արևելեան ազգերի հետ, հայերը դարձեալ ամենից շատ հոգատար ունեն դէպի ուսումնարանները։ Արանց և լինէին զետեղված հայերը, ամեն տեղ կը տեսնէք, որ կայ մի տիպացու, կամ քահանայ որ 8 թէ 10 երեխայ է սովորեցնում, իսկ շատ տեղ կը պատահէք փոքրիկ կանոնաւորված ուսումնարանները թէ աղջկերանց և թէ ագռանց համար։ Մեծ մասամբ այդ ուսումնարանները անձնազոհութիւն են պահանջում, այնպէս որ հաճելի չէ պատահում որ բոլորովին յետ ընկած մի տեղում մի որ և է երիտասարդ նուիրում է իրան դաստաուութեան կամ առանց ռօճիկի կամ բաւականանում է ամենաչնչին ռօճիկով...

Այդ տեսակ ուսումնարանները որք այս բոպէիս բազմաթիւ են կովկասեան հայերի մէջ ոչինչ հաստատ ազդիւրներից եկամուտ չունեն, այլ պահպանվում են հայ-հասարակութեան նուիրատուութիւններով։ Այդ կամաւոր ասուքները պայմանաւորվում են երկու բանով՝

Մինը որ այս ինչ քաղաքի կամ գիւղի հայ-հասարակութիւնը տալիս է կամաւոր միջոցներ այն պատճառով որ գիտէ թէ ուսումնարանը կը հիմնվի իր սեղում և իր հսկողութեան տակ կը գտնվի,—իսկ եթէ նրան ասէին՝ շարունակեցէք ձեր, կամաւոր նուէրները, բայց փոխանակ ձեր գիւղի կամ քաղաքի մէջ իրաւունք ունենալ ուսումնարան բանալու, ուղարկեցէք ձեր փողերը Տրապիզոնի մէջ հիմնվող հայոց ակադեմիային,—հազիւ թէ կը գտնվէր մի եկեղեցի կամ մէկ համայնք, որ հաճայնվէր զրկվել իր մօտ ուսումնարան ունենալուց այն յոյսով, թէ Տրապիզոնի մէջ ակադեմիա պիտի հիմնվի...

Ամենաւոր և շատ անգամ առատ ասուքների երկրորդ պատճառը այն է, որ հայ-հասարակութիւնը գիտէ թէ հիմնելով իր (հասարակական կամ եկեղեցական) փողով ժողովրդական ուսումնարանը, նրա երեխաները կը սովորեն աղօթել մայրենի լեզվով և կընդունեն ուսման սկզբնական տարրերը նոյնպէս մայրենի լեզվով։ Եթէ այդ չը լիներ, երևի կամաւոր նուէրները կամ կը նուազվէին կամ բոլորովին կը կտրվէին,

II

Մենք հարկաւոր համարեցինք մեր ուսումնարանների այդ փոքրիկ պատկերը ներկայացնել, որովհետև այս բոպէիս ամենքին հետաքրքրում է այն խնդիրը, թէ շուտով կառավարութեան կողմից կը նշանակվին տեսուչներ տարրին կարգի ուսումնարանների վրա, որ դաւանութեանը և պատկանէին նրանք, իրաքանչիւր գաւառում մի մի տեսուչ։

Այդէն տեսուչների այդ փոքր թիւը ցոյց է տալիս, որ նրանք նշանակվում են ոչ թէ սանկավարժական, այլ կառավարչական նպատակով։

Մերոջ գաւառում մի ժողովրդական տեսուչ չէ կարող ոչ հեռևել ուսման, ոչ մանկավարժական ուղղութիւն տալ ուսումնարաններին։ Նորա ազդեցութիւնը կարող է միայն կառավարչական լինել՝ պահանջել որ ուսումնարանը հաստատ նիւթական ազդիւրներ ունենայ, կամ որ ուսուցիչը ունենայ ուսուցչութիւն վարելու համար դիպլոմ, ունենայ ուսուցչութեան համար օրինական իրաւունք։ Այս այս տեսակ կանոնները գնելով կարելի է կարծել որ ուսումնարանների թիւը կը նուազվի որովհետև մի կողմից հասարակութեան նուիրատուութիւնները կամաւոր են և չնչին, իսկ միւս կողմից ուսուցչութեան դիպլոմ ունեցողը անձնազոհութիւն չի անի գնալ մի գիւղում նստել, չնչին ռօճիկով կամ առանց վարձատրութեան ուսուցչութիւն վարելու համար։

Մեր ժողովրդական ուսումնարանների միակ արժանաւորութիւնը իսկ նորանումն է պարունակվում, որ նրանք ամենքը հիմնված են՝ մի կողմից նիւթական զոհաբերութեան, իսկ միւս կողմից բարոյական անձնազոհութեան վրա։ Այս կանոնաւոր, օրինական, կառավարչական գոյութիւնը այն հիմնարկութեան որ կայանում է բարեբաղութեան, զոհաբերութեան և անձնազոհութեան սկզբի վրա, այն հեռևանք կունենայ, որ եթէ այն հիմնարկութիւնների թիւը կը նուազվի, յոյս ունենք, որ մեացածները կը բարեկարգվին։

Մանաւանդ որ ուրիշ գաղանիք չունին մեր սկզբնական ուսումնարանները, եթէ ոչ այն որ յաստուկ է բոլոր հայ-հասարակութեան և խոր կերպով արմատացած է նրա մէջ, անջնջելի գրոշմված է իւրաքանչիւր հայի սրտում՝ իր զաւակներին մայրենի լեզվով կրօնք սովորեցնել, մայրենի լեզվով նրանց սկզբնական ուսում տալ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՁԵՒԸ

**Ընթերցողին յիշելով „Մշակի" անցեալ համարի Ներքին տեսութեան մասին, և որպիսի հարուստ հունձք խոստանում էր նոցա ուսումնասիրութիւնը փիլիսոփայութեան, իրաւաբանական արհեստի, բժշկութեան, հին աշխարհի կրօնքի պատմութեան և քրիստոնէական եկեղեցւոյ ուսման համար։ Եւ այդպէս, իրաւաբանական արհեստը ունի իւր ներկայացուցիչը Մխիթար Գօշի օրէնսդրութիւնը, գրված տասներկու երրորդ դարումը, որը պարունակում է իւր մէջ յոդուածներ ամենահին հռոմէական իրաւաբանութեան, որ մնում էին մինչև Թէոդոսի օրէնսդրութիւնը.—նա ունի իւր մէջ և շատ նիւթեր կանոնական և քաղաքական իրաւունքների։ Բժշկական արհեստը ունի հայոց գրականութեան մէջ որպէս ներկայացուցիչ Մխիթար Հերացուն, որոյ աշխատութիւնն է «Հետազօտութիւն ջերմախտների» և տասնվեցերրորդ դարումը՝ Ամերդօվլաթին, որ յօրինեց «բժշկական բառարան»։ Առաջին յիշատակարանները հայոց գրականութեան, որ հասել են մեզ, չեն անցնում մեր թուականի չորրորդ դարից։ Նոքա ցոյց են տալիս նորան այն աստիճան կատարելագործութեան մէջ, որը ենթադրում է նորա մշակութիւնը շատ երկար ժամանակների ընթացքում. որովհետև գրականութեան այդպիսի սրնթաց զարգացումը կը հակառակէր այն օրէնքներին, որոնք կառավարվումեն մարդկային հոգւոյ հանդարդ և ազատ ընթացքով, եթէ այդ անցքը չունենար իւր պատճառները և իւր յաջորդաբար նախապատրաստութիւնը անցեալի մէջ։ Մեք ունեմք գրական փաստեր հայոց նախկին գրականութեան գոյութեան մասին այն դարերում, որոնք շատ հին են նորա յայտնութիւնից. աւելի ճիշտ ասած, նորա վերածնելութիւնից չորրորդ դարումը։ Մովսէս Խորենացին, որ ապրում էր հինգերրորդ դարումը, մի գրող, որ խորին գիտութիւն ունէր իւր հայրենիքի հնութեան մէջ, յիշում է Մծբինի և Եդեսիայի մեհենական գրքերի մասին։ Նա խօսում է պատմական երգերի ժողովածուների համար, որոնք պահվում էին թագաւորների և իշխանական ընտանիքների թանգարաններում, այդ երգերը մինչև նորա ժամանակը երգում էին Գողթան ասուած ժողովրդական երաժիշտները, ածելով քնարի նման մի նուագարանի վերա, որ կոչվում էր «քամբիռն»։—Երգերը բաժանվում էին երեք չրջան՝ ասորական, մեդա-պարսկական և հայկական։ Մի քանի կտոր այդ երգերից, որոնք հասցրեց մեզ Մովսէս Խորենացին, իւր «Հայոց պատմութեան» մէջ, ներշնչուած են վիպասանական հոգւով, նոցա մէջ տպված առևտրական բանկի ժողովի մասին յօդվածը, մեր պարտաւորութիւն ենք համարում մի երկու խօսք ասել առհասարակ ընտրութեան ձևի մասին։

Ամենայն տեղ ընդունված է հետևեալ ձևը՝ մի պաշտօնի համար ժողովի անդամները առաջարկում են իրանց կանդիդատներին բերանացի կամ թղթերով։ Այդ կանդիդատներից կազմվում է մի ցուցակ։ Ցուցակում եղածից իւրաքանչիւրը, որ չէ հրաժարվել, քուէարկութեան տակն է ընկնում, այնպէս որ նա եթէ թղթերով ստացաւ 21 ձայն, քուէարկութեամբ կարող է պակաս ստանալ, քան թէ ուրիշը, որ թղթերով ստացաւ օրինակի համար 10 ձայն։ Ահա ինչպէս՝ թղթի վրա առաջարկվում է գրել միայն մէկի անունը, բայց ես այդ պաշտօնի համար ունեմ արժանաւոր երեք անձինք։ Ես գրում եմ մէկին, իսկ միւս երկուսին առաջարկում եմ գրել իմ ծանօթներին, որք եթէ աւելի արժանաւոր կանդիդատ չունեն, ընդունում են իմ առաջարկածին։ Քուէարկութեան ժամանակ ես այդ երեքից ամեն մէկին ընտրողական, սպիտակ քուէ եմ տալիս։

Կարող է պատահել այնպէս, որ իմ գրած անունը ծանօթներիս աչքում անարժան է երևում։ Ուրեմն նրանք իրանց գրած անուններին տալիս են ընտրողական քուէ իսկ իմ գրածին ոչ։ Դուրս եկաւ, որ իմ գրածը ստացաւ մի ձայն, իսկ իմ ծանօթների գրած անունները ստացան երկու երկու։ Կարող է և այնպէս պատահել, ինչպէս եղաւ Առևտրական բանկի ընդհանուր ժողովում, որ մի քանի բաժանորդները ունեն 3 կամ 4 ձայն։ *) Սոցանից իւրաքանչիւրը գրում է թղթի վրա մէկ անուն այնպէս որ եթէ 4 ձայն ունեցող 10 անձն գրեն մի և նոյն անունը, կը յայտնվի որ այդ անունը ստացաւ

*) Բաժանորդական բանկում ով որ աւելի ակցիաներ ունի, աւելի էլ ձայն ունի։ Փոխադարձ կրէդիտի բանկում բոլոր անդամները հաւասար ձայն են վայելում։ Խմբ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Հայոց լեզուի և գրականութեան ուսումնասիրութեան հարկաւորութիւնը *)

I

Մինչև տասներորդ դարու վերջը և ներկայ դարու սկիզբը հայոց լեզուի և գրականութեան ուսումնասիրութիւնը սահմանափակվում էր խիստ նեղ չրջանով և համարվում էր բացառութիւն։ Նա ծառայում էր միայն աստուածաշունչը բացատրելու համար, աստուածաբանական խնդիրները մեկնելու համար, լատինական միսիոներաց վիճաբանութեանց համար հերձուածողների—հայերի դէմ, նորանց դէպի կաթոլիկութիւն դարձնելու նպատակաւ։ Միայն վերջին ժամանակում հայոց լեզուի և գրականութեան ուսումնասիրութիւնը անցաւ հոգևոր չրջանից դէպի աշխարհականը։ Հայոց գրականութեան յիշատակարանները խիստ սակաւ, կամ ամենևին յայտնի չէին Եւրոպայում.—սակայն թնչ աշխարհ աւելի հարուստ է հնութեան յիշատակարաններով քան թէ Հայաստանը, մի երկիր, որ եղաւ երկրորդ օրօրոցը մարդկութեան, որ եղաւ պատերազմի դաշտ, ուր զարնուեցան միմեանց հետ արեւելքի և արևմուտքի մեծամեծ ազգերը, Ասորիք և Պարսիկները, Աղէքսանդր մեծի զօրքերը և Դարեհը, Սելեվկացոց հպատակ Յոյները, կայսրութեան ժամանակուայ Հռոմայեցիք և Պարթևները,—մի երկիր, որ կրեց Արաբացոց, Թուրքերի, Մանգօլների արշաւանքները, և բազմիցս անգամ ներկուեցաւ արիւնով և աւերակ դարձաւ։ Մի քանի տարի առաջ մինչև անգամ չէին նշմարում, թէ որպիսի օգտաւէտ տեղեկութիւններ հայոց լեզուն և գրականութիւնը պարունակում էին իւրեանց մէջ պատմութեան, աշխարհագրութեան և համեմատական փիլիսոփայութեան մասին, և որպիսի հարուստ հունձք խոստանում էր նոցա ուսումնասիրութիւնը փիլիսոփայութեան, իրաւաբանական արհեստի, բժշկութեան, հին աշխարհի կրօնքի պատմութեան և քրիստոնէական եկեղեցւոյ ուսման համար։ Եւ այդպէս, իրաւաբանական արհեստը ունի իւր ներկայացուցիչը Մխիթար Գօշի օրէնսդրութիւնը, գրված տասներկու երրորդ դարումը, որը պարունակում է իւր մէջ յոդուածներ ամենահին հռոմէական իրաւաբանութեան, որ մնում էին մինչև Թէոդոսի օրէնսդրութիւնը.—նա ունի իւր մէջ և շատ նիւթեր կանոնական և քաղաքական իրաւունքների։ Բժշկական արհեստը ունի հայոց գրականութեան մէջ որպէս ներկայացուցիչ Մխիթար Հերացուն, որոյ աշխատութիւնն է «Հետազօտութիւն ջերմախտների» և տասնվեցերրորդ դարումը՝ Ամերդօվլաթին, որ յօրինեց «բժշկական բառարան»։ Առաջին յիշատակարանները հայոց գրականութեան, որ հասել են մեզ, չեն անցնում մեր թուականի չորրորդ դարից։ Նոքա ցոյց են տալիս նորան այն աստիճան կատարելագործութեան մէջ, որը ենթադրում է նորա մշակութիւնը շատ երկար ժամանակների ընթացքում. որովհետև գրականութեան այդպիսի սրնթաց զարգացումը կը հակառակէր այն օրէնքներին, որոնք կառավարվումեն մարդկային հոգւոյ հանդարդ և ազատ ընթացքով, եթէ այդ անցքը չունենար իւր պատճառները և իւր յաջորդաբար նախապատրաստութիւնը անցեալի մէջ։ Մեք ունեմք գրական փաստեր հայոց նախկին գրականութեան գոյութեան մասին այն դարերում, որոնք շատ հին են նորա յայտնութիւնից. աւելի ճիշտ ասած, նորա վերածնելութիւնից չորրորդ դարումը։ Մովսէս Խորենացին, որ ապրում էր հինգերրորդ դարումը, մի գրող, որ խորին գիտութիւն ունէր իւր հայրենիքի հնութեան մէջ, յիշում է Մծբինի և Եդեսիայի մեհենական գրքերի մասին։ Նա խօսում է պատմական երգերի ժողովածուների համար, որոնք պահվում էին թագաւորների և իշխանական ընտանիքների թանգարաններում, այդ երգերը մինչև նորա ժամանակը երգում էին Գողթան ասուած ժողովրդական երաժիշտները, ածելով քնարի նման մի նուագարանի վերա, որ կոչվում էր «քամբիռն»։—Երգերը բաժանվում էին երեք չրջան՝ ասորական, մեդա-պարսկական և հայկական։ Մի քանի կտոր այդ երգերից, որոնք հասցրեց մեզ Մովսէս Խորենացին, իւր «Հայոց պատմութեան» մէջ, ներշնչուած են վիպասանական հոգւով, նոցա

*) Յիշեալ դասախօսութիւնը հայոց լեզուի և գրականութեան մասին կարդացել է 11 յունվարի ներկայ ամի, համալսարանի հայկական բաժնի ամբիոնից, պարոն է. Դիւլօրիէն, Ֆրանսիացի երևելի հայագէտը։ Թէև նա յայտնումէ մի քանի պատմական սխալ կարծիքներ, այսու ամենայնիւ հարկաւոր եմք համարում ծանօթացնել մեր ընթերցողին այդ յօդուածի հետ, որով յայտնվումէ մի եւրոպացի գիտնականի հայեացքը մեր լեզուի, գրականութեան և նոցա ուսումնասիրելու հարկաւորութեան մասին։

Առն։ Խմբ.